

Աշոտ Գ. Մանուչարյան
Պատմ. գիյր. թեկնածու

**Ց-ԲԴ ԴԱՐԻ ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՇԱՐՔԻ
ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՐՈՒՄ***

Բանալի բառեր – հայոց իշխան, շարք, ցուցակ, վիմագրագիտական համալրում, ուսումնասիրություն, դամբարան, տապանագիր, եկեղեցի, տիրույթ:

Մուտք

Հայկական վիմական արձանագրությունների աղբյուրագիտական բացառիկ արժեքի մասին խոսել ենք բազմիցս: Ընդգծվել է ժամանակի դրոշմը կրող վիմագրերի կարևորությունը ոչ միայն հայագիտության, այլև ընդհանրապես հայերի և Հայաստանի հետ որևէ առնչություն ունեցած այլազգիների պատմության ուսումնասիրության համար: Բազմասփյուռ վիմագրերի շնորհիվ կատարվում են ցարդ անհայտ իրողությունների բացահայտումներ, պատմագիտական շտկումներ, ձգբրտումներ ու լրացումներ: Այսպես՝ հույժ կարևոր է Գաբեղյանք պատմական գավառի Նախիջևան գյուղում գտնվող Արտավազդ Կամսարականի տապանաքարի արձանագրությունը, որով ամբողջությամբ լրացվում է 8-րդ դարի հայոց իշխանների շարքը:

**1. 7-9-րդ դարերի հայոց իշխանների ցուցակը
ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի**

Ժամանակին նշանավոր հայագետ-աղբյուրագետ, արևելագետ-արարագետ Արամ Տեր-Ղևոնդյանը հայկական, բյուզանդական

* Հոդվածն ընդունվել է տպագրության 21.08.2023:

և արաբական աղբյուրների հիման վրա կազմել և ներկայացրել է հայոց իշխանների ցուցակը արաբական առաջին արշավանքից (640 թ.) մինչև Բագրատունյաց թագավորության սկիզբն ընկած ժամանակահատվածում.

«Թեոդորոս Ռշտունի	639-654
Համագասպ Մամիկոնյան	654-661
Գրիգոր Մամիկոնյան	661-685
Աշոտ Բագրատունի	685-689
Ներսեհ Կամսարական	689-693
Սմբատ Բագրատունի	693-726
Աշոտ Բագրատունի	732-748
Մուշեղ Մամիկոնյան	748-753
Սահակ Բագրատունի	753-770
(Սմբատ Բագրատունի	753-775)
Աշոտ Բագրատունի	775-781
Տաճատ Անձևացի	781-785
Աշոտ Մսակեր Բագրատունի	790 (մոտավ.)-826
Բագարատ Բագրատունի (իշխանաց իշխան)	826-851
(Սմբատ Ապլարաս Բագրատունի	826-855)
Աշոտ Բագրատունի	855 (սպարապետ) – 862 (իշխանաց իշխան)» ¹ :

Մեզ հետաքրքրող 8-րդ դարի հայոց իշխանների ցուցակն Ա. Տեր-Ղևոնդյանն առանձին ներկայացրել է իր՝ աշխարհաբարի փոխադրած Ղևոնդի «Պատմության» ծանոթագրություններում.

«Սմբատ Բագրատունի	701/703-726
Աշոտ Բագրատունի	732-749
Մուշեղ Մամիկոնյան	749-753
Սահակ Բագրատունի	753-770
Սմբատ Բագրատունի	753-775
(Աշոտ Բագրատունի)	775-781
Տաճատ Անձևացի	781-785» ² :

1 Տեր-Ղևոնդյան Ա., «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1964, N 2, էջ 130: Հեղինակի պարզաբանմամբ՝ «Փակագծում նշվածները սպարապետներ են, որոնք իրենց նախորդող Հայոց իշխանի մահվանից կամ հեռացումից հետո կառավարել են երկիրը: Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում «իշխանաց իշխանը» մնաց որպես հատուկ գործակալություն» (նույն տեղում):

Ինչպես տեսնում ենք, բաց են մնում 726–732 և 785–790 (մոտավ.) թվականներն ընդգրկող ժամանակահատվածները: Դրանցից մեկում պետք է իշխած լինի Արտավազդ Կամսարականը, որի մասին մեզ հայտնի մատենագրական աղբյուրները լռում են:

2. Արտավազդ Կամսարականի տապանագիրը և նրա գործունեության ժամանակը

Այրարատ նահանգի Գաբեղյանք պատմագավառի Նախիջևան գյուղի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցուն կից գետնահարկ կամարաձև դամբարանում կա երկու արկղաձև տապանաքար, որոնցից մեկի հարավային նիստին փորագրված է վեցտողանի արձանագրություն³.

✠ ԱՅԾԱՏՐԱՍԱՆ. ԼԻԻԲԵԲՅԱԿ ՈՉՏՐԱ ԱԶՐԱՆ
 ՄԱՍԲԻՍՄԱԿՏԱՆԳՈՅԵԱԼ. ԸՆԴՏԱՐՍԻԻ
 ԵՐԱՆԵԼԻՏՐԱՐՍԻԿԷՇԴԿԱՄԱՐԱԿՆԱԴԱՏԻԴԱՏ
 ԴԱՏՐԻԿԵԻԻՆԻՄԱՍԱՅ ՈՅՈՒՄ ԴԻՏՐԱՏԱՏԱ
 ԴԱՏՐԻԿԻՇԻՐԱԿԱՅԵԻԱՇՈՒՐԱՅԻՆԵԻԱՍՈՒՍԻՆ
 ՇՈՒՇԱՆԱՅՄԱՍԻԿՈՆԵՆԻ

ԱՍՏՈՒԱԾՅԱՀՐԱՄԱՆ ԵՒԼԻԻՔ ԵՒ ՔՐԻՍՏՈՍՅԱԿՈՉ
 ՀՐԱԺԱՐԻՄԱՆ/ՄԱՍԲ Ի ՍՄԱ Է ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԸՆԴ ՀԱՐՍ ԻԻՐ /
 ԵՐԱՆԵԼԻ ՏԷԼՐ ԱՐՏԱԻԱԶԴԻ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ԱՊԱԿԻՏԻՊԱՏ
 ՊԱՏՐԻԿ / ԵՒ ԻՇԵԱՐՆ՝ ՀԱՅՈՑ ՈՐԴԻ ՀՐԱՀԱՏԱ / ՊԱՏՐԻԿԻ
 ՇԻՐԱԿԱՅ ԵՒ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՅՆ ՏԷԱՌՆ՝ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ
 ՇՈՒՇԱՆԱՅ ՄԱՍԻԿՈՆԵՆԻ⁴:

2 Ղևոնդ, Պատմություն, Աշխարհաբար թարգմ., ներած. և ծանոթագր.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 1982, էջ 166: Ա. Տեր-Ղևոնդյանը փակագծերում նշել է Ղևոնդ պատմիչի չիիշատակած անունը:

3 Տե՛ս Օրբելի И., Избранные труды, Ер., 1963, էջ 411: Երկրորդ տապանաքարն արձանագրություն չունի, և ենթադրվում է, որ այն պատկանում է Արտավազդ Կամսարականի կնոջը՝ Շուշան Մամիկոնյանին:

4 Ալիշան Ղ., Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 136, 174: Արձանագրության վերծանության այլ տարբերակների համար տե՛ս Մեսրոպ վարդապետ, Էջմիածին եւ հայոց հնագոյն եկեղեցիներ, պրակ Ա, Ս. Էջմիածին, 1904, էջ 105, Գաբեղին վարդապետ Յովսէփեան, Քարտեզ հայ հնագրութեան, «Շողակաթ», Ս. Էջմիածնի հայագիտական ժո-

Արձանագրությունը թվագրված չէ, ինչը որոշակի դժվարություններ է ստեղծում հայոց իշխան Արտավազդ Կամսարականի գործունեության ժամանակահատվածի հստակեցման հարցում: Սակայն չենք կարծում, թե նա հայոց իշխան է եղել 785-790 թթ., քանի որ այդ դեպքում, լինելով երկրի առաջին դեմքը, ինչո՞ւ պետք է Աշոտ Մսակերին վաճառեր Արշարունիքի և Շիրակի իր տիրույթներն ու հեռանար երկրից: Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ Կամսարականները հայրենիքից հեռացել են 774-775 թթ. հակարաբական ապստամբությունից հետո⁵, ըստ Լեոյի՝ 783 թ., որից հետո նրանք անհետացել են պատմության թատերաբեմից⁶: Ավելի հավանական է, որ Կամսարականներն իրենց տիրույթները վաճառած ու հեռացած լինեն 785 թ. ամռանից հետո, երբ հայոց իշխան Տաճատ Անձևացու և սպարապետ Բագարատ Բագրատունու հետ Դերբենդի կողմերում գտնվող Քերանի տոթակեզ դաշտի հնոցաձև ապառաժներում խորշակահար մահացավ Ներսեհ Կամսարականը: Այդ կապակցությամբ «Հայոց պատմության» ակադեմիական նոր բազմահատորյակի հրատարակիչները գրում են, որ Աշոտ Մսակերը «Կամսարականների մնացորդներից գնեց նաև Շիրակ և Արշարունիք գավառները, որոնց տանուտեր Ներսեհ Կամսարականը 785 թ. սպանվել էր Դերբենդի մոտ»⁷: Ա. Տեր-Ղևոնդյանի ուսումնասիրությամբ՝ «Հարուն ալ-Ռաշիդի գահակալությունից (786) սկսած միայն վեց տարվա ընթացքում (786-792) իրար հաջորդեցին Արմինիայի հինգ ոստիկաններ, որոնց օրոք երկիրը ավելի ծանր վիճակում էր գտնվում... Պատմական աղբյուրները հստակ վկայություններ չեն տալիս որոշելու համար, թե ով էր Հայոց իշխանը այս դժվարին տարիներին: Եվ կարելի է ենթադրել, որ այդ գործակալությունը գուցե թափուր էր մնացել:

դովածու, Գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1913, էջ 176, **Орбели И.**, նշվ. աշխ., էջ 411: Հ. Օրբելու վերծանությունն ամենաստույգն է, որից էլ մենք օգտվում ենք:

5 Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Հայաստանում, Եր., 1965, էջ 65:

6 Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 2, Եր., 1967, էջ 439:

7 «Հայոց պատմություն», հատ. II: Միջին դարեր, Գիրք առաջին (IV դ. սկիզբ - IX դ. կես), Եր., 2018, էջ 333:

.... 790-ական թթ. սկզբներին Հայաստանում գահերեց իշխանի հեղինակություն էր վայելում հիշյալ Աշոտ Բագրատունին, որ կոչվում էր Մսակեր»⁸:

Ինչ վերաբերում է 726-732 թթ. բացին, ապա այն գալիս է հայ պատմիչներից: Մասնավորապես Ասողիկը հայտնում է, թե «յետ Սմբատայ եկաց իշխան Հայոց Աշոտ Բագրատունի որդի Վասակայ ամս ԺԵ»⁹: Ա. Տեր-Ղևոնդյանը թերահավատորեն է մոտենում պատմիչի հաղորդած տեղեկությանը, սակայն մատենագրական վկայությունը զանց չառնելու համար գրում է. «Սմբատ Բագրատունու մահվանից մինչև Աշոտի պաշտոնապես Հայոց իշխան ճանաչվելու թվականն ընկած տարիների ընթացքում Աշոտ Բագրատունին կարող էր իշխան լինել անպաշտոն կերպով, սակայն պաշտոնապես ճանաչվեց միայն 732-ին»¹⁰: Բայց նա, այնուհանդերձ, իր՝ վերը հղված հայոց իշխանների երկու ցանկերում էլ բաց է պահել 726-732 թվականները:

Մեսրոպ և Գարեգին վարդապետները կարծում են, որ Արտավազդ Կամսարականը «վախճանուել է Ը. դարի առաջին քառորդին»¹¹: Հ. Օրբելին համակարծիք է նրանց հետ, որ Արտավազդ Կամսարականը թոռն է 689-693 թթ. հայոց իշխան Ներսեհ Կամսարականի և որդին Թալինի Ս. Աստվածածին եկեղեցու արձանագրության մեջ հոր և մոր՝ Շուշանի հետ հիշատակվող Հրահատի¹²:

Կամսարական նախարարական տան մասին իր ուսումնասիրության մեջ Արտավազդի կնոջ՝ Շուշան Մամիկոնյանի վերաբերյալ բավական ուշագրավ դիտարկում է արել հայր Սահակ Կոզյանը. «Հաւանօրէն այս Տիկնոջ մասին խօսք կ'ըլլայ Վահան Գողթնացոյ պատմութեան մէջ: Իբր 735-ին Սուրբը 6 ամիս կը ձգնի Շիրակայ մէջ»¹³, բայց Տիկինն Շիրակայ գաւառի երկուցեալ ի վրէժխնդութենէ Արաբացոց, ստիպեաց զՍ. Վահան Գողթնացի մեկնիլ երթալ ի սահ-

8 **Տեր-Ղևոնդյան Ա.**, «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում, էջ 128:

9 «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 104:

10 **Տեր-Ղևոնդյան Ա.**, «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում, էջ 128:

11 **Գարեգին վարդապետ Յովսէփեան**, նշվ. աշխ., էջ 175:

12 Տե՛ս **Օրբելի Ա.**, նշվ. աշխ., էջ 413, 434:

13 Ս. Օրմանյանի ենթադրությամբ՝ ս. Վահան Գողթնացին Շիրակում ձգնել է Խծկոնքի վանքում (տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Ա, Ս. Էջմիածին, 2001, ս. 996):

մանաց իւրոց (Չամչ. Բ, 384, Ալիշան, Այր. 5): Ենթադրելով, որ նա էր Շուշան՝ կին Արտաւազդայ, կը հետեւի, որ 735է յառաջ մեռած էր Արտաւազդ եւ Տիկինը առանձին կ'իշխէր Կամսարական հողերու վրայ: Արդէն արձանագրութենէն ալ կը հետեւի որ Շուշան Մամիկոնեան տակաւին կենդանի էր, երբ Արտաւազդի դամբանը կը շինուէր եւ յայտնի կացութեան մէջ: Տիկնոջ իշխանութիւնը եւ Վահանի դէպքը կը ցուցնեն որ Արտաւազդի որդիները- եթէ ունէր- առ նուազն անչափահաս էին»¹⁴:

Մի բան պարզ է, որ հայոց իշխան Արտավազդ Կամսարականը մահացել է երիտասարդ հասակում: Դե եթէ նրա մասին պատմիչները լռում են, նրա մահվան պատճառի մասին էլ խոսք լինել չի կարող: Մաղաքիա արք. Օրմանյանը, անդրադառնալով Հայոց մեծաց կաթողիկոս Դավիթ Ա Արամոնեցու արժոռակալության (728-741) առաջին տարիներին, նշում է, որ դրանք «շփոթներու մէջ անցան», քանի որ հյուսիսից Հայաստանի վրա պարբերաբար հարձակվում էին խազարները, որոնց «ասպատակութիւնները բաւական նեղութիւն պատճառեցին Արաբացի գունդերուն, եւ մեծ վնաս հասցուցին Հայաստանի բոլոր գաւառներուն, մինչեւ Զարեանդի հարաւային կողմերը: Թէպէտ Արաբացի բանակը, Հայ գունդերով ալ զօրացած, մերթնդմերթ յաղթութիւններ կը տանէր, սակայն Խազիւններ նոր գունդերով նոր գարուններուն իրենց ասպատակութիւնները կը նորոգէին»¹⁵: Արդ, եթէ խազարների դեմ արաբական զորքերի կազմում կռվել են հայկական զնդեր, ապա դրանց գլխավոր հրամանատարը պետք է եղած լինէր հայոց իշխան Արտավազդ Կամսարականը: Արդյոք այդ կռիվներում նա էլ չի՞ արժանացել հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (661-685) ճակատագրին, որը գոհվեց խազարների դեմ պատերազմում, ինչպէս հետագայում՝ 785 թ.՝ Արտավազդ Կամսարականի որդի Ներսեհը:

Այսպիսով՝ վերոշարադրյալից հետևում է, որ միայն Նախիջևանի տապանագրից հայտնի ապահյուպատ պատրիկ և հայոց իշխան

14 **Կոզեան Ս.**, Կամսարականները «Տեարք Շիրակայ եւ Արշարունեաց». պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1926, էջ 165-166: Կոզյանը 785 թ. վախճանված Կամսարականների տանուտեր Ներսեհին ներկայացնում է որպէս Արտավազդի որդի (տե՛ս նույն տեղում, էջ 170): Ս. Վահան Գողթնացու ճգնական դեգերումները Հայաստանում տևել են հինգ տարի՝ 732-737 թթ.:

15 **Մաղաքիա արք. Օրմանյան**, նշվ. աշխ., ս. 990:

Արտավազդ Կամսարականը՝ որպես Հայաստանի իշխանապետ, պաշտոնավարել է 726-732 թթ.: Նրանով վերջնականապես ամբողջանում է 8-րդ դարի հայոց իշխանների շարքը.

Սմբատ Բագրատունի	701/703-726
Արտավազդ Կամսարական	726-732
Աշոտ Բագրատունի	732-749
Մուշեղ Մամիկոնյան	749-753
Սահակ Բագրատունի	753-770
Սմբատ Բագրատունի	753-775
(Աշոտ Բագրատունի)	775-781
Տաճատ Անձևացի	781-785
Աշոտ Մսակեր Բագրատունի	մոտավորապես 790 թվականից:

Աշոտ Գ. Մանուչարյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է վիմագրագիտությունը, միջնադարյան Հայաստանի քաղաքական պատմությունը, հայոց եկեղեցու պատմությունը, պատմամշակութային հուշարձանների (վանքեր, եկեղեցիներ) ուսումնասիրությունը, հայկական պատմական աղանդները և ժամանակակից աղանդավորական շարժումները: Հեղինակ է 7 գրքերի, գրքույկների (մի մասը՝ եռալեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն), 80 գիտական հոդվածների և հրապարակումների:

Էլ. հասցե՝ ashot.manucharyan.1959@mail.ru

EPIGRAPHIC ADDITION OF A NUMBER OF PRINCES OF ARMENIA IN THE 8th CENTURY

Ashot G. Manucharyan
Candidate of Sciences in History

Key words – prince of Armenia, row, list, epigraphic, addition, crypt, grave inscription, church, possession.

In the underground crypt of the Church of St. Stepanos in the village of Nakhichevan, Kars historical region, there are two box-shaped tombstones. On the southern slope of one of them, a 6-line inscription is carved, in which the name Artavazd Kamsarakan is read, and that he was an apahupat patrick and prince of Armenia. The grave inscription also mentions Hrahat, the father of Artavazd, who was the ruler of the Shirak and Arsharunik regions, and his wife Shushan Mamikonyan. The inscription has no date, which makes it difficult to determine the time of the activity of the prince of Armenia Artavazd Kamsarakan. Armenian historiographers do not remember his name. The name of Artavazd Kamsarakan is also missing from the list of the princes of Armenia in the 8th century, where the years 726-732 remain open.

A group of prominent Armenologists (Mesrop Ter-Movsesyan, Garegin Hovsepyan, Joseph Orbeli) believe that Artavazd Kamsarakan died in the first quarter of the 8th century and that he is the grandson of the prince of Armenia Nerseh Kamsarakan (689-693), who in the inscription of the Talin Church of the Holy Mother of God mentions his wife Shushan and son Hrahat (father of Artavazd).

According to our research, it turns out that Artavazd Kamsarakan should have ruled in 726-732. After these years, in particular in 735, as S. Kogyan noted, a woman ruled in the possessions of the Kamsarakans. It is assumed that this woman was the widow of Artavazd Kamsarakan, Shushan Mamikonyan. With the name of Artavazd Kamsarakan the list of the Armenian princes of the 8th century finally becomes complete.

ЭПИГРАФИЧЕСКОЕ ПОПОЛНЕНИЕ СПИСКА КНЯЗЕЙ АРМЕНИИ VIII В.

Ашот Г. Манучарян

Канд. ист. наук

Ключевые слова - князь Армении, ряд, список, эпиграфический, дополнение, склеп, надгробная надпись, церковь, владение.

В подземном склепе церкви Св. Степаноса в селе Нахичеван Карсской области находятся два надгробия коробчатой формы. На южной стороне одного из них вырезана надпись в 6 строк, в которой читается имя Артавазда Камсаракана, то, что он был консулом, патроном и князем Армении. В надгробной надписи упоминаются также Храхат, отец Артавазда, который был правителем Ширакской и Аршаруникской областей, и жена Шушан Мамиконян. Надпись не имеет даты, что затрудняет определение времени деятельности князя Армении Артавазда Камсаракана. Его имя армянским историографам мало известно. Оно также отсутствует в списке князей Армении VIII в., в котором незаполненными остаются лишь 726-732 гг.

Группа видных арменоведов (Месроп Тер-Мовсесян, Гарегин Овсепян, Иосиф Орбели) считают, что Артавазд Камсаракан умер в первой четверти VIII в., и он является внуком князя Армении Нерсеха Камсаракана (689-693 гг.). В надписи в Талинской церкви Св. Богоматери упоминается также его жена Шушан и Храхат (отец Артавазда).

В результате нашего исследования выясняется, что Артавазд Камсаракан предположительно правил в 726-732 гг. После этих лет, в частности в 735 г., как заметил С. Когян, владениями Камсараканов правила женщина. Предполагается, что этой женщиной была Шушан Мамиконян – вдова Артавазда Камсаракана. С установлением имени князя Артавазда Камсаракана и времени его правления список армянских князей VIII в. стал полным.

REFERENCES

1. “Hayots‘ patmut‘yun”, hat. II: Mijin darer, Girk‘ arajin (IV d. skizb - IX d. kes), Yer., 2018 **(In Armenian)**.
2. “Step‘anosi Tarōnets‘woy Asoghkan Patmut‘iwn tiezerakan”, S. Peterburg, 1885 **(In Armenian)**.
3. **Alishan Gh.**, Shirak, Venetik, 1881 **(In Armenian)**.
4. **Garegin vardapet Yovsēp‘ean**, K‘artēz hay hnagrut‘ean, “Shoghakat”, S. Ējmiatsni hayagitakan zhoghovatsu, Girk‘ arajin, S. Ējmiatsin, 1913 **(In Armenian)**.
5. **Ghevond**, Patmut‘yun, Ashkharhabar t‘argm., nerats. yev tsanot‘agr. **A. Ter-Ghevondyani**, Yer., 1982 **(In Armenian)**.
6. **Kogean S.**, Kamsarakannerē “Teark‘ Shirakay yew Arsharuneats’”. patmakan usumnasirut‘iun, Vienna, 1926 **(In Armenian)**.
7. **Leo**, Yerkeri zhoghovatsu, hat. 2, Yer., 1967 **(In Armenian)**.
8. **Maghak‘ia ark‘. Ōrmanean**, Azgapatum, S. Ējmiatsin, 2001 **(In Armenian)**.
9. **Mesrop vardapet**, Ējmiatsin yew hayots‘ hnagoyn yekeghets‘iner, prak A, S. Ējmiatsin, 1904 **(In Armenian)**.
10. **Orbeli I.**, Izbrannyje trudy, Jer., 1963 **(In Russian)**.
11. **Ter-Ghevondyan A.**, “Hayots‘ ishkhan”-ē arabakan tirapetut‘yan zhamanakashrjanum, “Patmabanasirakan handes”, Yer., 1964, N 2, ēj 121-134 **(In Armenian)**.
12. **Ter-Ghevondyan A.**, Arabakan amirayut‘yunnerē Hayastanum, Yer., 1965 **(In Armenian)**.